# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արմենֆարմ ՍՊԸ-ն Վ1Պ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 30 | Ֆրանկլաբ | Էնզիմեքս L9 | Էնզիմեքս L9 | Ֆրանկլաբ | 1-5 լիտրանոց գործ.փակ տարայով և համապատասխան չափիչ բաժակով հեղուկ խտանյութ, (մեկ լիտրը համարվում է 1 հատ չափման միավոր): Պարունակում է N,N-դիդեցիլ-N-մեթիլ-պոլի(օքսիէթիլ) ամոնիումի պրոպիոնատ (ՉԱՄ), դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ (ՉԱՄ), ֆերմենտների համալիր (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), ֆունկցիոնալ բաղադրամասեր՝ մակերեսային ակտիվ նյութեր, ներկանյութ, բուրանյութ, ջուր, կոռոզիայի ինհիբիտորներ: Չի պարունակում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: PH-7,8-8,8: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: 1 լիտր խտանյութից պատրաստվում է 0,5%-անոց 200 լիտր աշխատանքային լուծույթ, որն ապահովում է հակաբակտերիալ՝ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա, բորբոսասնկեր) ազդեցությունը 5-30 րոպեում, ), ինչպես նաև օժտված է ակտիվությամբ հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, լեգիոնելոզի) հարուցիչների նկատմամբ: Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը 14 օր է, նախատեսված բազմակի օգտագործման համար, օժտված է ակտիվությամբ՝ հատուկ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | վտանգավոր վարակների (ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, լեգիոնելոզի) հարուցիչներին նկատմամբ: Նախատեսված է բժշկական գործիքների, էնդոսկոպների ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար՝ երեքը մեկում միաժամանկ: Ունի որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով հաստատված են ներկայացված ցուցանիշները, երաշխավորված է Storz, կամ Olympus, կամ Fujinon, կամ Pentex բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից՝ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Արմենֆարմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом Վ1Պ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 30 | | | | | |